«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության
ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան 76շ.

նիստի օրը 17/07/2020թ.
նիստի ժամը 11[00]

թիվ՝ 4

Արձանագրություն
«ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/62» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին
հանձնաժողովի նախագահ
Գարիկ Բոշյան
անդամներ
Արմենուհի Գալստյան
Նունե Ազիզյան
Պետրոս Նադիրյան
հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան

Հանձնաժողովի նիստին բացակայում էր
Արամ Ջիլավյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի գնահատման

Հանձնաժողովի նիստի նախագահ՝ Գարիկ Բոշյան

1. Ընդունել ի գիտություն որ՝

1.1 Կազմակերպված բանակցությունների շրջանակներում գային առաջարկները նվազեցրեցին Сим Тек Медикал Сервис, Պրոֆտեստ ՍՊԸ-ն և Տելիա Մեդ ՍՊԸ-ն:

չ/հ	գնման առարկայի անվանումը	մասնակիցների անվանումները և նվազեցրած գանային առաջարկները				
		ինքնարժեք, շահույթ, ԱԱՀ, ընդհանուր	Պրոֆտեստ ՍՊԸ (ՀՀ դրամ)	Տելիա Մեդ ՍՊԸ (ՀՀ դրամ)	Сим Тек Медикал Сервис	
					քայլ 1	
1	մագնիսառեզոնանսային տոմոգրաֆ	ինքնարժեք	625.000.000	592.000.000	1.320.000 EUR	713.275.200 ՀՀ դրամ
		շահ.	55.000.000	93.000.000	5.000 EUR	2.701.800 ՀՀ դրամ
		շահ+ինք.				
		ԱԱՀ				
		ընդհանուր	680.000.000	685.000.000	1.325.000 EUR	715.977.000 ՀՀ դրամ
					քայլ 2	
		ինքնարժեք	625.000.000	592.000.000		
		շահ.	54.000.000	87.999.000		
		շահ+ինք.				
		ԱԱՀ				
		ընդհանուր	679.000.000	679.999.000		

«Պրոֆտեստ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած սկզբնական գնային առաջարկով որպես ինքնարժեք նշել է 680.000.000 ՀՀ դրամ

1.2. Համադրելով սկզբնական գնային առաջարկը և կազմակերպված բանակցությունների շրջանակներում «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի ներկայացրած 679.000.000 ՀՀ դրամ գնային առաջարկը պարզ է դառնում, որ բանակցությունների ժամանակ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի առաջարկված գնի (679.000.000 ՀՀ դրամ) ինքնարժեքը ցածր է հայտով ներկայացրած սկզբնական գնային առաջարկի ինքնարժեքից: Այսինքն, բանակցություններին «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն առաջարկել է իր կողմից առաջարկվող ապրանքի ինքնարժեքից ցածր գին, իսկ ինչպես սահմանված է սույն գնման ընթացակարգի հրավերի 5.1 կետով՝ առաջարկվող գինը չի կարող պակաս լինել ապրանքի արժեքի, փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերի ինքնարժեքից: Նշյալից հետևում է, որ բանակցություններին «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի ներկայացրած գինը՝ 679.000.000 ՀՀ դրամ, չի համապատասխանում սույն գնման ընթացակարգի հրավերի 5.1 կետին, այդ իսկ պատճառով բանակցություններին «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի ներկայացրած 679.000.000 ՀՀ դրամ գնային առաջարկը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից գնահատող հանձնաժողովը որոշեց՝ բանակցություններին «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի ներկայացրած 679.000.000 ՀՀ դրամ գնային առաջարկը մերժել:

Վերը նշված դիրքորոշմանը հանգելու համար հիմք են ծառայել գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ԳԲՔԱ-ԼՕ-2020/06, ԳԲՔԱ-ԼՕ-2020/19, ԳԲՔԱ-ԼՕ-2020/42 որոշումներում արտահայտված դիրքորոշումները:

Ընդունել որոշում ***կողմ 4 (չորս), դեմ 0 (զրո)*** ձայներով

2. Գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակիցների մասին

2.1 Գնահատող հանձնաժողովի կողմից քննարկվեց գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտեր ներկայացրած Մասնակիցների գնային առաջարկները և հանձնաժողովը նախապատվությունը տալով նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցներին որոշեց՝

կողմ **4** ***(չորս),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով.

գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել Տելիա Մեդ ՍՊԸ-ին

Գնումների մասին ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն սահմանել 10 օրացույցային օր անգործության ժամկետ:

Ընդունել որոշում ***կողմ 4 (չորս), դեմ 0 (զրո)*** ձայներով

հանձնաժողովի նախագահ
Գարիկ Բոշյան
անդամներ
Արմենուհի Գալստյան

Նունե Ազիզյան

Պետրոս Նադիրյան
հանձնաժողովի քարտուղար՝
Հարություն Օհանյան